



# ՍԵՐՁԵՂ ԴՈՎԼԱԹՈՎ

## ԿՈՄԱՐՈՄԻՍՆԵՐ

Կոմարոմիս յոթերորդ

(«Սովետական Էստոնիա»: Ապրիլ: 1976 թ . )

«Հագուստ մարսեցու համար» (Մարդն ու իր մասնագիտությունը): Ի՞նչ ենք ակնկալում լավ դերձակից: Նրա կարած հագուստը պետք է համապատասխանի նորաձևությանը: Իսկ ի՞նչ կասեք մի ձեռարարի մասին, ում կարածը նորաձևության պահանջներից հետ է մնում... Երկու հարյուր տարով: Մինչդեռ այդ մարդը մեծ հարգանք է վայելում ու արժանի է ամենաշերմ խոսքերի: Խոսքը ԷԽՍՀ Ռուսական դրամատիկական թատրոնի ձեռարար-վարպետ Վոլդեմար Միլդի մասին է: Նրա մշտական հաճախորդներից են իսպանական ազնվականներ ու հրացանակիրներ, ռուս ցարեր ու ճապոն սամուրայներ, դեռ ավելին՝ աղվեսներ, աքաղաղներ ու անգամ մարսեցիներ:

Թատերական զգեստը ծնվում է նկարչի ու դերձակի համատեղ ջանքերով: Այն պետք է արտացոլի տվյալ դարաշրջանը, միաժամանակ՝ համապատասխանի ներկայացման ոգուն ու գործող անձանց բնավորությանը: Կարո՞ղ եք պատկերացնել Օնեգինին պարկանման կախ տաքատով, կամ Սոբակեիչին՝ նրբագեղ ֆրակով... Մտրուկ Եգոպոսի զգեստը ստեղծելու համար Վոլդեմար Միլդը ուսումնասիրել էր անտիկ կերպարվեստը, հունական դրաման...

Սերթուկ, կապա, բեկեշ, մենտիկ, արխալուդ, սրանք բոլորը հագուստի խիստ որոշակի տեսակներ են՝ իրենց յուրահատկություններով ու արքեսուարներով:

Երիտասարդ դերասաններից մեկը, պատմում է Միլդը, մի անգամ հարցրեց ինձ . «Ֆրակն ու սմոկինգը նույնը չէ՞»։ Ինձ համար դրանք նույնքան տարբեր են, ինչպես հեռուստացույցն ու ձայնագրիչը։

Հաճախելով այլ թատրոնների ներկայացումներին, Վոլդեմար Հենդրիկովիչը մասնագիտական բժախնդրությամբ քննում է գործող անձանց հագուստը։

Եվ միայն իմ սիրած Վախթանգովի թատրոնի ներկայացումների ժամանակ եմ մոռանում, որ ձեւարար եմ ու հետեւում եմ ներկայացմանը, ասում է Վ . Միլդը։ Դա վկայում է, որ ձեւարար-դերձակներն ու զգեստների նկարիչներն այդ թատրոնում անթերի են աշխատում։

Անթերի է նաեւ իր՝ դերձակ, նկարիչ, թատրոնի մարդ Վոլդեմար Միլդի աշխատանքը»։

Թոուցքաժողովին նյութս գովեցին։

Դովլաթովը կարողանում է հետաքրքիր գրել ցանկացած մանրուքի մասին։

Վերնագիրն էլ տպավորիչ է...

Ինչ էլ բառեր է գտնում՝ արքեսուարներ... Հաջորդ օրը կանչում է Տուրոնոկը։

Նստեր։

Նստեցի։

Խոսակցությունը տհաճ է լինելու։

«Քեզ հետ ցանկացած խոսակցություն տհաճ է, ապուշ», մտածեցի։

Ձերն ի՞նչ խորագիր է։

«Մարդն ու իր մասնագիտությունը»։ Հետաքրքրվում ենք հազվադեպ մասնագիտությամբ մարդկանցով։ Նաեւ՝ անսպասելի...

Գիտե՞ք, թե մասնագիտությամբ ով է ձեր Միլդը:

Գիտեմ: Դերձակ է: Թատերական դերձակ-ձեւարար: Անսպասելի...

Դա հիմա: Իսկ առաջ:

Իսկ առաջ՝ չգիտեմ:

Դե իմացեք, պատերազմի ժամանակ դահիճ էր: Ծառայում էր գերմանացիներին: Կախաղան էր հանում սովետական հայրենասերներին: Դրա համար տասներկու տարի նստել է:

Տեր Աստված, ասացի:

Դուք հասկանո՞ւմ եք, թե ինչ եք արել: Հրապարակավ գովաբանել եք Հայրենիքի դավաճանին: Անվերադարձ վարկաբեկել եք ուշագրավ խորագիրը:

Բայց նրա թեկնածությունը ինձ թատրոնի տնօրենն է տվել:

Թատրոնի տնօրենը Էս-Էս-ի նախկին օբեր-լեյտենանտ է: Բացի այդ՝ երկնագույն է:

Ի՞նչ է նշանակում՝ երկնագույն է:

Նախկինում այդպես էին անվանում համասեռականներին: Ձեր նկատմամբ ոտնձգություններ չի՞ արել:

Արել է, մտածեցի, բա չի՞ արել: Ինձ՝ լրագրողիս, ձեռքով բարեկեց: Ես էլ զարմացա...

Այստեղ հիշեցի մի ֆրանսիացու հետ ունեցած զրույցս: Խոսքը համասեռականության մասին էր:

Մեզ մոտ դրա համար դատում են, պարծեցա ես:

Իսկ թուրքի համար ձեզ մոտ չե՞ն դատում, դժգոհ արձագանքեց ֆրանսիացին...

Ես ձեզ չեմ մեղադրում, ասաց Տուրոնկը: Դուք գործել եք կարգի համաձայն:  
Այսինքն՝ թեկնածությունը համաձայնեցրել եք: Եվ այնուամենայնիվ՝ ավելի  
շրջահայաց պետք է լինել: Հերոսի ընտրությունը, կարենոր, հույժ կարենոր գործ  
է...

Դեպքի մասին խմբագրությունում մի երկու շաբաթ խոսեցին: Հետո աչքի ընկավ  
Բուշը՝ գործընկերս: Հարցազրույց էր արել ԳՖՀ-ի առևտրական նավատորմի մի  
նավապետի հետ: Հոկտեմբերյան հեղափոխության տարեդարձի նախօրեին:  
Կապիտանը Բուշի նյութում փառաբանում էր խորհրդային իշխանությունը: Հետո  
պարզվեց, որ այստեղից փախած էստոնացի է: Վաթսունինը թվականի ամռանը  
բայդարկայով ճողոպրել էր Ֆինլանդիա: Այնտեղից՝ Շվեդիա: Եվ այլն: Բուշը  
հարցազրույցը ծայրից ծայր հորինել էր: Դեպքը մեծ արձագանք ունեցավ, եւ իմ  
մասին մոռացան...